ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՖԱՐՀԱԴ ՍԱՅԻԴԻ ՌԱՄԵԶԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ ԵՎ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԴԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՄԵՋ (ԻԻՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ը.00.01 - «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝
Գագիկ Սերյոժայի Գալստյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝
Թաթուլ Նորայրի Մանասերյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝
Արմեն Ռովելի Ներսիսյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2017 թվականի ապրիլի 7-ին, ժամը 13:30-ին՝ Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի Տնտեսագիտության թիվ 015 Մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, Երևան, Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2017 թվականի մարտի 6 -ին:

015 Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, տեխ.գ.դ., պրոֆ.՝ Ա.Հ. Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Արդի ժամանակներում պետությունների համար բավարար տնտեսական աճի հասնելու միջոցներից մեկը մասնավորեցումն է:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում բազմաթիվ երկրներ սեփականաշնորհեցին իրենց պետական ձեռնարկությունների որոշակի կամ մեծ մասը: Պետությունների կողմից առաջ են քաշվել մասնավորեցումն արդարացնող բազմաթիվ նպատակներ՝ չնայած նրան, որ դրանցից յուրաքանչյուրին տրված առաջնահերթությունը տարբեր է թե՛ երկրներից դուրս, թե՛ երկրների ներսում:

Այդ նպատակները ներառում են պետական եկամուտների աճը և բյուջեի դեֆիցիտի նվազեցումը, օտարերկրյա ուղղակի ներդրումների խրախուսումը, կապիտալի շուկաների զարգացումը, SOE՝պետական ձեռնարկությունների արդյունավետության բարելավումը և աջակցությունը երկրի տնտեսական աճին:

Սեփականության ձևերի այս փոփոխության պոտենցիալ ազդեցությունը տնտեսական աճի վրա արծարծված է միկրոտնտեսագիտական տեսություններում, որոնք կիրառվում են բարեփոխումները հիմնավորելու համար, այսինքն՝ սեփականության իրավունքի տեսությունը, հասարակական ընտրության տեսությունը և առաջնային գործակալի տեսությունը (Principal-agent theory): Միկրոտնտեսագիտական ուսումնասիրությունների արդյունքների համաձայն մասնավորեցումը կարող է հանգեցնել կորպորացիայի արդյունավետության բարձրացմանը, արհեստավարժության բարելավմանը և մասնավորեցված ընկերությունների երկամտաբերության աճին:

Մասնավորեցման քաղաքական հայեցակարգը պնդում է, որ պետական ձեռնարկատիրությունն անարդյունավետ է, քանի որ կիրառվում է որպես քաղաքական գործիք՝ որոշակի քաղաքական օգուտներ քաղելու նպատակով: Սեփականության վերափոխումը, ինչպես նաև կազմակերպությունների և քաղաքական ազդեցությունների միջև կապի թուլացումը կարող է բարձրացնել գործունեության արդյունավետության մակարդակը: Հիմնվելով Արևմտյան երկրներում մասնավորեցման միջոցով ձեռք բերված դրական արդյունքների և ԱՄՀ-ի ու Համաշխարհային Բանկի խորհուրդների վրա՝ ԻԻՀ-ն որոշեց իր սեփական քաղաքականությունը հաստատել այդ հիմքի վրա:

Մասնավորեցման գաղափարն ԻԻՀ-ում առաջացավ այն ժամանակ, երբ 1983թ. պետական ձեռնարկությունների հաստատումով ակնկալվող արդյունքները չիրականացվեցին: Մյուս կողմից Իրան-Իրաքյան պատերազմը և տնտեսական պատժամիջոցները կանխարգելում էին այդպիսի քաղաքականությունների իրականացմանը: Այնուամենայնիվ, երբ խաղաղություն հաստատվեց, այդ հարցը պետական առաջնահերթ հիմնախնդիրների շարքին դասվեց և առաջ մղվեց ըստ սահմանադրության 44-րդ հոդվածի, ինչպես նաև

տնտեսական զարգացման առաջին պլանի դրույթների (1989-1993): /Համաձայն սահմանադրության 44-րդ հոդվածի, ԻԻՀ-ի տնտեսական համակարգը պետք է հիմնված լինի հանրային, կոոպերատիվ և մասնավոր հատվածների վրա՝ համապատասխան պլաններով/:

Մասնավորեցման և տնտեսական աճի փոխհարաբերության վերաբերյալ ամբողջ աշխարհում բազմաթիվ հետազոտություններ են կատարվել: Սակայն, պետք է նշել, որ այս թեմայի վերաբերյալ ԻԻՀ-ում բանում կատարված հետազոտությունները բավարար չեն: Վերոնշյալ փոխհարաբերության վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունները հանգել են տարբեր եզրակացությունների: Դրանց մի մասը բացահայտել է դրական փոխհարաբերություն մասնավորեցման և տնտեսական աճի միջև, իսկ մյուս մասը՝ բացասական: Քուք և Ուչիդա (2003) կատարված ուսումնասիրության համաձայն հաստատվել է բացասական փոխհարաբերության առկայությունը մասնավորեցման և տնտեսական աճի միջև:

Հետազոտությունը տարբերվում է նախկինում կատարված ուսումնասիրություններից այն առումով, որ ներմուծել է նաև մրցակցության և նավթային եկամուտների փոփոխականները, ընդ որում, վերջինս համարվում է կարևոր ազդեցիկ գործոն Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) տնտեսական աճի համար: Հաշվի առնելով ասվածը, մասնավորեցման ազդեցության ուսումնասիրումը ԻԻՀ տնտեսական աճի վրա՝ մակրոտնտեսական կարևորագույն գործոնների առումով հանդիսանում է արդիական հետազոտություն և դրա իրականացումը՝ անհրաժեշտություն:

<u>Հետազոտության նպատակը և խնդիրները:</u> Հետազոտությունը նպատակամղված է ուսումնասիրել տնտեսական աճի և մասնավորեցման միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունը, հատկապես մասնավորեցման արդյունքում ստացվող եկամուտների ազդեցությունը ԻԻՀ տնտեսական աճի վրա՝ Բարրոյի մոդելի հիման վրա, 1990-2014 թթ. ժամանակահատվածում:

Դրված նպատակից ելնելով ատենախոսությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

1. Ուսումնասիրել թե արդյոք Իրանի տնտեսական աճի և մասնավորեցման միջև գոյություն ունի՞ փոխհարաբերություն: Մասնավորապես, տնտեսական աճի և մասնավորեցման միջև գոյություն ունի՞ նշանակալի փոխհարաբերություն, կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով:

2. Ուսումնասիրել թե նավթային տնտեսություններում, պետական այլ եկամուտներն ի՞նչ աստիճանով են ազդում տնտեսական աճի վրա:

3. Բացահայտել՝ արդյո՞ք մասնավորեցումն ու նավթային եկամուտները կարո՞ղ են խթանել Իրանի տնտեսական աճին:

4. Բացահայտել մասնավորեցման հետևանքով գոյացող եկամուտների դերը երկրի տնտեսական աճի վրա՝ կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Հետազոտության **առարկան** տնտեսության մասնավորեցման քաղաքականության բովանդակությունը, առանձնահատկությունները և իրական հետևանքներն են ԻԻՀ-ի տնտեսական աճի վրա, 1990-2014 թթ. ընթացքում:

Հետազոտության **օբյեկտ** են հանդիսացել տնտեսական զարգացման գործընթացում մասնավորեցման արդի հայեցակարգերն ու ծրագրերը, և այդ քաղաքականության իրականացման հետ առնչվող մակրոտնտեսական ցուցանիշները՝ նավթային եկամուտները, մասնավորեցումը, ՀՆԱ-ն, գնաճը, կառավարության չափը և տնտեսական աճը:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտությունում կիրառվել է գրադարանային ուսումնասիրության մոտեցումը, և որպես տեսական հիմք ծառայել են տնտեսագիտության դասական և նոր-դասական տեսությունների հիմնարար դրույթները, ինչպես նաև հիմնախնդրի վերաբերյալ մի շարք հետազոտողների ուսումնասիրությունների արդյունքները:

Հետազոտությունում կիրառվել է Բարրոյի (1991) էզզոգենիկ տնտեսական աճի մոդելը՝ անկախ և կախյալ փոփոխականների միջև փոխհարաբերությունը գնահատելու համար: Կիրառված բոլոր փոփոխականները բաժանվել են երկու ստուգիչ և հիմնական փոփոխականների այնպես, որ կառավարության ծախսումների մակարդակը, գնաճի մակարդակը, օտարերկրյա ուղղակի ներդրումների հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ ստուգիչ փոփոխականներն են, իսկ մրցունակությունը, նավթային եկամուտները և մասնավորեցումը հիմնական փոփոխականների բաղադրիչներն են: Պետք է նշել, որ մոդելին ավելացվել է նաև նավթային եկամուտների փոփոխականը, որպես առանցքային գործոն, որն ազդում է Իրանի տնտեսության վրա:

Մակրոտնտեսական փոփոխականների արդյունավետության ուսումնասիրության նպատակով օգտագործվել են T վիճակագրական տեստի արդյունքները: Նաև կիրառվել է Գրենջերի մոտեցումը՝ փոփոխականների միջև փոխհարաբերությունները ուսումնասիրելու նպատակով /վարկածների ընդունման կամ ժխտման միջոցով/:

Հետազոտությունում որպես տեղեկատվական հիմք ծառայել են Համաշխարհային բանկի (ՀԲ) կողմից տրամադրված վիճակագրական տվյալները՝ 1990-2014թթ. ժամանակահատվածի համար: Տվյալների վերլուծությունը կատարվել է E-views էկոնոմետրիկ համակարգչային ծրագրի միջոցով:

Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը կայանում է հետևյալում.

- Գնահատվել է ԻԻՀ տնտեսության մեջ կառավարության չափի և տնտեսական աճի միջև փոխհարաբերությունը, 1990-2014թթ. ժամանակահատվածի համար: Մասնավորապես որոշվել է կառավարության օպտիմալ չափը՝ 66% :
- Գնահատվել են ԻԻՀ կարևոր տնտեսական ցուցանիշների փոխադարձ կապը և ազդեցությունը միմյանց նկատմամբ, և որոշվել է դրանց արդյունավետությունը՝ հաշվի առնելով նավթային եկամուտները, մասնավորեցումից առաջացող եկամուտները, ինֆլյացիան, տնտեսական աճը և պետական ծախսումները:
- Բացահայտվել է նավթային եկամուտներից կախված տնտեսություններում, պետության այլ եկամուտների դերը և նշանակությունը տնտեսական աճի վրա:
- Բացահայտվել է մասնավորեցումից առաջացող եկամուտների դերը տնտեսական աճի վրա՝ կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով:

Հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը: Ատենախոսության մեջ ստացվել են գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, ինչպիսիք են կառավարության ծախսումների կրճատման ազդեցությունը պետբյուջեի վրա, մասնավոր հատվածի դերը օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման խթանման մեջ, սեփականության իրավունքը և դրա ներգործությունը շուկայական տնտեսության վրա, անցումային շրջանում գտնվող նավթային տնտեսություններում հանդիպող խոչընդոտներ, մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունը զարգացող երկրների տնտեսական աճի և զարգացման վրա: Մասնավորապես՝

- Կառավարության ծախսումների առումով, պետության չափի և տնտեսական աճի վրա դրա ազդեցության վերաբերյալ գիտելիքը մեծ նշանակություն ունի պետական բյուջեի և տարբեր նախագծերի կազմման ժամանակ:
- Եկամուտների ստացման առումով, հստակեցվել են պետական տարբեր եկամուտների հոսքերի նշանակությունն ու դերը երկրի տնտեսական աճի վրա՝ ընդգծելով յուրաքանչյուր եկամուտի ներդրումը Իրանի տնտեսական աճի խթանման հարցում:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել պետական օրենսդիր մարմինների և քաղաքականություն մշակող անձանց կողմից՝ Իրանի տնտեսական աճին ուղղված զարգացման պլաններում ավելի իրական թիրախներ նախագծելու համար: Հետազոտության արդյունքները նաև կարող են օգտագործվել հետագա ուսումնասիրություններում, որոնք առնչվում են նավթային տնտեսություններում՝ հանրայինից մասնավորին անցնելու տնտեսական աճի մոդելների մշակման հետ, թե՛ կարճաժամկետ և թե՛ երկարաժամկետ կտրվածքով:

Ատենախոսության դրույթների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են 2013թ., 2014թ. և 2016թ. ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի «Տեսական և ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնում, Իրանի Իսլամական Հանրապետության Շիրազի համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 6 գիտական հոդվածներում, որոնցից երեքը լույս են տեսել միջազգային պարբերականներում և ամսագրերում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է նախաբանից, երեք գլուխներից, եզրակացություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսությունը ներառում է 18 աղյուսակ, 6 գծապատկեր: Ատենախոսության ծավալը՝ առանց հավելվածի կազմում է 109 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության նախաբանում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակը, խնդիրները, հիմնական վարկածները, առարկան և օբյեկտը, մեթոդաբանությունը, ինչպես նաև աշխատանքի հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը:

Ատենախոսության առաջին՝ «Մասնավորեցման տեսական հիմնախնդիրները» գլխում ներկայացվել են մասնավորեցման սահմանումներ, մեթոդներ և քննարկվել են դրա վերաբերյալ տարբեր տեսակետներ ու կարծիքներ: Այլ կերպ ասած՝ գլխում քննարկվել է մասնավորեցման պատմական ընթացքը և դրա տնտեսական նշանակությունը:

Գոյություն ունեն մասնավորեցման տարբեր եղանակներ, որոնցից յուրաքանչյուրի մեջ պետության և մասնավոր ներդրողների միջև բիզնեսի որոշակի ռիսկի բաշխվածություն կա: Այդ եղանակներից յուրաքանչյուրը մասնավորեցման շրջանի համար առանձին ժամանակ է պահանջում, և հնարավոր չէ ամեն մի տնտեսական ենթակառույցի կամ կազմակերպության համար եզակի եղանակ ընտրել: Մասնավորեցման եղանակի ընտրությունը կախված է ընկերության առանձնահատկություններից, կարգավորող միջավայրից և հետապնդվող նպատակներից: Բացի դա, պետք է նաև նշել, որ մասնավորեցման եղանակը ենթարկվում է ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական գործոնների ազդեցությանը, քանի որ այն քաղաքական գործընթացի մաս է կազմում: Այդ է պատճառը, որ մասնավորեցման վրա ազդող գործոնները ներառում են սեփականատիրության պատմությունը, հասարակության ֆինանսական և մրցակցային իրավիճակը, կառավարության գաղափարաբանական մոտեցումը շուկայի և ապակարգավորման նկատմամբ,

արտադրության կարգավորող կառույցի պոտենցիալ հեռանկարները, ազդեցիկ շահագրգիռ կողմերի փոխհատուցման կարիքը, կապիտալի շուկայի վիճակը, պոտենցիալ ներդրողների փորձը, պետության պատրաստակամությունը՝ սեփականությունը օտարերկրացիներին փոխանցելու համար (Megginson W.L., 2005)[1]:

Մասնավորեցումն ազդում է և՝ միկրոտնտեսության և՝ մակրոտնտեսության մակարդակով: Մասնավորապես մակրոտնտեսական փոփոխականների առումով մասնավորեցումն ազդում է ՀՆԱ-ի, բյուջեյի պակասորդի, աշխատավարձերի դրույքաչափի, ազգային խնայողությունների, մասնավոր սպառումների, զբաղվածության, վճարային հաշվեկշռի և այլ փոփոխականների վրա: Քանի որ, մասնավորեցումը՝ որպես քաղաքականություն կարող է ապահովել տնտեսական աճի համապատասխան կառուցվածք, տնտեսագետներն ու միջազգային ֆինանսական կազմակերպությունները, ինչպիսիք են Համաշխարհային բանկը (ՀԲ) և ԱՄՀ-ը, որդեգրել են մասնավորեցման քաղաքականություն՝ վերջին տասնամյակների ընթացքում որոշ երկրներում տնտեսական բարեփոխումներ իրականացնելու նպատակով: Ակներև է՝ մասնավորեցման և մակրոտնտեսական մակարդակով արդյունավետության միջև փոխհարաբերության փաստը:

Մասնավորեցման մակրոտնտեսական նշանակության առումով իրականացվել են սահմանափակ քանակով հետազոտություններ: Համաձայն Pirie (1992)[2] շատ դեպքերում մասնավորեցումը տեղի է ունենում ո՞չ այն պատճառով, որ պետությունների ցանկությունն է դա, այլ այն պատճառով, որ նրանք մասնավորեցումը համարում են որպես ծախսերի կրճատման ուղի:

Վաշինգտոնյան համաձայնագիր հասկացությունն առաջին անգամ օգտագործվել է 1989 թվականին տնտեսագետ Ուիլիամսոն Ջ.-ի (Williamson J.,1989)[3] կողմից՝ որոշակի տնտեսական քաղաքականությունների հստակ նկարագրության համար, որոնք նա համարում էր ստանդարդ բարեփոխումների փաթեթ՝ զարգացող երկրներում ճգնաժամային իրավիճակից դուրս գալու համար: Փաթեթը ներառում է մակրոտնտեսական կայունացման, ազատ առևտրի և ներդրումների, ինչպես նաև ազգային տնտեսության մեջ շուկայական ուժերի ընդլայնման վերաբերյալ քաղաքականություններ:

Վաշինգտոնյան համաձայնագիրը հիմնված է հետևյալ երեք գլխավոր հասկացությունների վրա՝ **1**. տնտեսության մեջ կառավարության ֆինանսական միջամտությունների նվազեցում, **2**. մասնավորեցում, **3**. ազատ շուկա:

Վաշինգտոնյան համաձայնագիրը նպատակ է հետապնդում ստեղծել ազատ աշխատանքի և առևտրի միջավայր, որտեղ մասնավոր հատվածը գլխավոր

---

[1] Megginson W. l.; The financial economics of privatization, Oxford university press, New York; 2005; pp:53-71

[2] Pirie M.; "Privatization in the Nineties; Edited by Emanon Butler". Adam Smith Institute, London; 1992; pp:726

[3] Williamson J.; What Washington Means by Policy Reform, in Latin American Readjustment: How much has Happened, Washington: Institute for International Economics; 1989; pp: 501-522

դերակատարությունն ունի՝ տնտեսական աճի խթանման հարցում: Վաշինգտոնյան համաձայնագրի պարզեցված կառույցի շրջանակներն են՝ ա. մակրոտնտեսական կայունացում, բ. գների ազատականացում, գ. զանգվածային մասնավորեցում: Պարզեցված Վաշինգտոնյան համաձայնագիրը մեծ դժվարությամբ էր արձագանքում շուկայի ֆունդամենտալիզմին: Դրա իմաստն այն էր, որ զարգացող երկրներում մաքուր ազատ շուկայի ներմուծումը կլուծեր գոյություն ունեցող շուկայական անարդյունավետությունը:

Մասնավորեցման կարևորությունը պայմանավորված է նրանով, որ այն ձուլված է մրցակցային քաղաքականության հետ: Այլ կերպ ասած՝ մասնավորեցումը ծառայում է արդյունավետ մրցակցային միջավայր ստեղծելուն, որը դեռևս պետք է լինի պետության հսկողության տակ:

Ավելի քան 100 ուսումնասիրություններ են կատարվել, որոնք ընդգրկում են բազմաթիվ զարգացած, զարգացող և անցումային երկրների բոլոր հատվածների մասնավորեցումը՝ տարբեր եղանակների միջոցով: Այդ ուսումնասիրությունները կարելի է դասակարգել հինգ խմբերում. **1**. Մասնավորեցման գնահատումների մեծ մասը դիտվում է ընկերության մակարդակում ֆինանսական և արտադրողական ցուցանիշների միջոցով, վաճառքից առաջ և հետո արտադրողականության և շահութաբերության համեմատությունը, արտադրության ծավալների փոփոխությունը, ներդրումները, կարողությունների օգտագործումը և այլն: Այս ուսումնասիրություններն ընդարձակ վկայություններ են տալիս այն մասին, որ երբ մասնավորեցումը ճիշտ է կատարվում, այն բարելավում է գործունեությունը տարբեր պարամետրերով և տարբեր ձևերով: **2**. Մասնավորեցման ֆինանսական և հարկաբյուջետային ազդեցության սահմանափակ, բայց աճող դերը ցույց է տալիս մասնավորեցման և տնտեսական աճի փոխկապակցվածությունը: **3**. Մասնավորեցման տնտեսական հետևանքները և ազդեցություններն ընդհանուր բարեկեցության վրա լայնորեն ուսումնասիրված չեն: Չնայած մի քանի խիստ գնահատումները ցույց են տալիս, որ մասնավորեցումը դրական հետևանքներ է ունեցել: Փաստերի իրատեսական գնահատման համաձայն՝ բարեկեցության առումով նկատված ազդեցությունները դրական են եղել, իսկ երբեմն էլ շատ զգալի: **4**. Զբաղվածության և աշխատանքի շուկայի վերլուծությունները ցույց են տալիս, որ միշտ չէ, որ մասնավորեցումը տանում է գործազրկության: Հետևանքները կարող են տարբեր լինել՝ արտացոլելով տվյալ երկրի և արդյունաբերության տարբերությունները: Փաստացի հաշվարկների գնահատմամբ՝ մասնավորեցումը հաճախ հանգեցրել է զբաղվածության բարձրացմանը՝ և՛ ձեռնարկությունների, և՛ ողջ տնտեսության մակարդակով: **5**. Մասնավորեցան ամենաքիչ ուսումնասիրված ոլորտները մասնավորեցման հետևանքներն են եկամուտի և հարստության բաշխման վրա:

Այսպիսով, ակնհայտ է դառնում, թե մասնավորեցումը որքան կարևոր կարող է լինել: Այնպես որ, եթե այն իրականացվում է մրցակցային իրավիճակը

համապատասխան կերպով բարելավելու հետ մեկտեղ, ցանկացած երկրի համար կարող է զուգորդվել տնտեսական աճով և օգուտներով՝ երկարաժամկետ կտրվածքում: Մասնավորեցման գործընթացը խթան է հանդիսանում ընկերությունների համար՝ շուկաներ վերադառնալու միջոցով բարձրացնելով նրանց արդյունավետությունն ու արտադրողականությունը, ինչպես նաև նվազեցնելով գները: Նեոկլասիկ մոտեցումը շեշտը դնում էր մասնավոր սեփականությունն ընդլայնման միջոցով արդյունավետությունն ու արտադրողականությունը բարելավելու վրա:

Ատենախոսության երկրորդ՝ «Մասնավորեցումը և տնտեսական աճը» գլխում արծարծվել են տնտեսական բարեփոխումների և մասնավորեցման հետ կապված հիմնախնդիրները, ինչպես նաև տնտեսական աճի և մասնավորեցման միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունը: Քննարկվել է նաև ԻԻՀ-ում տնտեսական զարգացման գործընթացը՝դրա փուլերը:

Զարգացած և զարգացող տնտեսություններում, մասնավորեցումը հանդիսանում է կառուցվածքային բարեփոխումների ծրագիրների հիմնական բաղադրիչը: Այսպիսի ծրագիրների նպատակն է ապահովել մակրոտնտեսական ավելի բարձր արդյունավետություն և խթանել տնտեսական աճ, ինչպես նաև կրճատել հանրային հատվածի վարկավորման պահանջները՝ ոչ անհրաժեշտ սուբսիդիաների վերացման միջոցով:

Լատինական Ամերիկայի երկրների անհաջող փորձի արդյունքում՝ 1970-ականներից մինչև վաղ 1980-ականները ի հայտ եկան հակասություններ՝տնտեսագիտության ոլորտի և բարեփոխումների քաղաքականության ասպարեզում: Խնդիրը կայանում էր նրանում, թե արդյոք մատնանշված երկրներում տնտեսական բարեփոխումների ձախողումը՝ բարեփոխումների քաղաքականությունների՞ հետևանքով էր, թե՞ մասնավորեցման սխալ գործընթացն էր հանգեցրել դրան:

Մասնավորեցումը կարելի է ուսումնասիրել տարբեր տեսանկյուններից՝ օրինակ կառավարման տեսանկյունից:

Jensen and Mackling (1976)[4] համոզմամբ, մասնավոր հաստատություններում ավելի քիչ են հանդիպում գլխավոր-գործակալ խնդիրները, քան կառավարականում: Որովհետև մասնավոր ընկերությունները՝ խրախուսելու հատուկ միջոցներ կիրառելով փորձում են ամուր և ուղղորդված համագործակցություն ստեղծել խմբերի միջև, մինչդեռ կառավարական ընկերություններում, երկար ժամանակի կտրվածքով դա տեղի չի ունենում՝ պակաս ճկունության և վերևից-ներքև հիերարխիկ կառուցվածքի շնորհիվ:

[4] Jensen M.C., Mackling W.H.; "Theory of the Firm: Managerial Behavior, Agency costs and ownership Structure", Journal of Financial Economics, 1976; pp: 305-360

Կառավարության ներկայությունն անհրաժեշտ է համարվում սոցիալական ոլորտում, սակայն պետական միջամտության մակարդակը տարբեր տնտեսություններում տարբեր է լինում: Դասական դպրոցը պետության միջամտությունը նվազագույն մակարդակի վրա է դնում, մինչդեռ սոցիալիստներն առաջարկում են, որ պետության միջամտությունը տնտեսության մեջ ամենաբարձր աստիճանի վրա լինի: Այսպիսով, ներկայումս ցանկացած տնտեսության մեջ կառավարության ներկայությունն ու դերն անհրաժեշտ է և անխուսափելի: Սակայն պետք է սահմանել այդ ներկայության և դերի օպտիմալ չափը, որպեսզի հնարավոր լինի օգնել պետությանը մրցակցել մասնավոր /հակառակորդ/ տնտեսությունների հետ: Ուստի, մի կողմից պետք է իրագործել մասնավորեցման պլանն այնպես, որ չանտեսվի կառավարության մասնակցությունը որպես ենթակառուցվածքային ներդրումների ազդեցիկ գործոն, և մյուս կողմից էլ խթանել և նպաստել տնտեսական աճին:

Ընդունված է համարել, որ մասնավորեցումն արժեքավոր քաղաքական գործիք է, որը տանում է բարելավման: Հասարակական ռեսուրսների մասնավորեցումը նոր արժեք է ներմուծում հանրային ակտիվների մեջ և ավելացնում է երկրի մասնավոր կապիտալի հիմքը:

Մասնավորեցման կիրառման համար կառավարության ամենակարևոր նպատակները ներառում են. **1**. կառավարության ֆինանսական բեռի նվազեցումը, **2**. մասնավոր սեփականությունների ընդլայնումը, **3**. կապիտալի շուկաների զարգացումը, **4**. արտաքին ներդրումների ներմուծման միջոցով նոր գիտելիքների և տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների կիրառումը, **5**. տնտեսության մեջ մենաշնորհային գործունեության սահմանափակումը, **6**. զբաղվածության ամենաբարձր մակարդակին և ընդունելի տնտեսական աճի մակարդակին հասնելը:

Տնտեսական աճի և մասնավորեցման միջև փոխհարաբերության վերաբերյալ հարցերն արծարծվել են մի շարք հետազոտությունների մեջ.

Բաերն ու Վիլլելան (Baer W., Villela A.V., 1994)[5] ուսումնասիրել են տնտեսական արդյունավետությունը՝ համեմատելով ստացված շահույթի ստորին աստիճանները պետական և մասնավոր ձեռնարկություններում: Ծառայությունների մասնավորեցումը բարելավում է հասարակության ընդհանուր բարեկեցության մակարդակը, նույնիսկ այն դեպքում, երբ պետության ծախսերը շարունակվում են: Այնպես որ, ծառայությունների մասնավորեցումից ստացված օգուտը պաշտպանում է այս կարծիքը: Rowthern and Chang (1993)[6] ամփոփեցին, որ քաղաքական տնտեսագիտությունը մասնավորեցման առումով զգալի

[5] Baer W., Villela A.V.; "Privatization and the Changing Role of the Statein Brazil: In Privatization in Latin America: New Roles for the Public and Privatizations". London: Praeger Publishers;1994; pp:8-12

[6] Rowthern L. and Chang H.; Public ownership and the theory of the state, in The Political Economy of Privatization Clarke, T. and C. Pitelis eds. London; 1993; pp: 899-901

դերակատարություն ունի և ավելի կարևոր է, քան սեփականության և մոնոպոլիստական հայեցակարգերի մասին քննարկումները:

Մասնավորեցումն ակտիվների և ֆունկցիաների վերաբաշխումն է՝ հասարակական հատվածից մասնավորին: Վերջերս, մասնավորեցումն ընդունվել է բազմաթիվ տարբեր քաղաքական համակարգերի կողմից և տարածվել ողջ աշխարհում: Մասնավորեցման գործընթացը, կարող է արդյունավետ միջոց հանդիսանալ հիմնարար կառուցվածքային փոփոխությունների համար՝ սեփականության իրավունքներ ձևավորելու և հաստատելու միջոցով, որոնք ուղղակիորեն հզոր անհատական խթաններ են ստեղծում: Ազատ շուկայական տնտեսությունը մեծապես կախված է լավ սահմանված սեփականության իրավունքներից, որոնցում մարդիկ անհատական որոշումներ են կայացնում իրենց իսկ շահերի համաձայն:

Գոյություն ունեցող կառավարության բաժնեմասը նվազեցնելու նպատակով, տարբեր երկրների կողմից մասնավորեցումը կիրառելու գլխավոր պատճառներից մեկը պայմանավորված է նրանով, որ շատ պետություններ մեծ և ընդարձակ են դարձել՝ բաղկացած լինելով բյուրոկրատիայի անհարկի ուռճացված խավերից: Այդ է պատճառը, որ շատ երկրներ վերակառուցման կարիք ունեն՝ մասնավորեցման միջոցով ձեռք բերվող արդյունավետության բարելավման համար: Մասնավոր սեկտորն արձագանքում է շուկայում առկա խթաններին, մինչդեռ հասարակական սեկտորը հաճախ ունենում է ոչ տնտեսական նպատակներ: Այլ կերպ ասած՝ հասարակական սեկտորն խիստ մոտիվացված չէ արտադրությունն առավելագույնի հասցնելու և ռեսուրսներն արդյունավետորեն բաշխելու հարցում՝ պատճառ հանդիսանալով պետության մեջ բարձր գներ և ցածր եկամուտներ ունեցող ձեռնարկությունների առաջացման համար:

Բազմաթիվ տեսական մոդելներ են առաջարկվել մակրոտնտեսական իրավիճակի և աճի վրա մասնավորեցման ունեցած ազդեցությունների մասին կանխատեսումներ անելու համար:

Ջիլֆասոնի (Gylfason,1998)[7] մոտ ցույց է տրվում, որ մասնավորեցումը բարձրացնում է ազգային արտադրությունը՝ երկոլորտ լրիվ զբաղվածության ընդհանուր հավասարակշռության մոդելի մեջ արդյունավետությունը բարձրացնելու միջոցով: Հանսենը (Hansen,1997)[8] օգտագործում է ընդհանուր հավասարակշռության թերի մրցակցային մոդելը, որպեսզի ցույց տրվի, որ սեփականության իրավունքի արտաքին բաշխումը կարող է նպաստավոր ազդեցություն ունենալ մակրոտնտեսական արդյունավետության վրա: Փլեյնը

[7] Gylfason T.; Privatization, efficiency and economic growth. CEPR discussion paper 1844; 1998; pp: 647-669

[8] Hansen N.,"Privatization, technology choice and aggregate outcomes". journal of public Economics; 1997; pp:425-442

(Plane, 1997)[9], օգտագործելով 35 զարգացող շուկայական տնտեսությունների տվյալները, եկավ այն եզրակացության, որ մասնավորեցումը նշանակալի դրական ազդեցություն ունի տնտեսական աճի վրա և այդ ազդեցությունն ավելի հզոր է այն դեպքում, երբ մասնավորեցումը տեղի է ունենում արդյունաբերության կամ էլ ենթակառուցվածքների, քան այլ ոլորտներում: Բարնեթը (2007)[10] օգտագործում է 18 երկրների մակրոտնտեսական և մասնավորեցման տվյալները, բացահայտելու համար այն, թե մասնավորեցման արդյունքում բյուջեին փոխանցված հասույթը հակվա՞ծ է կուտակվելու և կիրառվելու՝ տեղական ֆինանսավորման մակարդակը նվազեցնելու համար: Նրա մյուս գլխավոր բացահայտումն այն էր, որ ընդհանուր մասնավորեցումը, հակառակ միայն բյուջեին փոխանցված հասույթին, կապված է նաև մակրոտնտեսական գործունեության բարելավման հետ, ինչն արտահայտված է ավելի բարձր իրական ՀՆԱ-ի աճի և ավելի ցածր գործազրկության մակարդակի հետ: Փլեյնը (1997) և Բարնեթը (2007) եկան այն եզրակացության, որ մասնավորեցումը դրական և նշանակալի ազդեցություն ունի տնտեսական աճի վրա: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ Քուքը և Ուչիդան[11] հակառակ արդյունքների հանգեցին, որն ըստ նրանց կարող էր պետական անհրաժեշտ բարեփոխումների բացակայության հետևանքով լիներ:

ԻԻՀ տնտեսությունն իր մեծությամբ 18-րդն է աշխարհում: Պաշտոնական մարմինների վկայությամբ 2015թ. այն կդառնա 12-րդը: Իրանի տնտեսությունը խառը և անցումային տնտեսություն է՝ ընդարձակ հասարակական հատվածով: Տնտեսության մոտ 50%-ը կենտրոնական պլանավորման տնտեսություն է հանդիսանում: Այն կարելի է որակել նաև որպես բազմակողմանի, այնուամենայնիվ, երկրի արտահանումների մեծ մասը կազմում են նավթը և գազը, որոնք էլ ապահովել են 2011թ. պետական եկամուտների զգալի մասը: Իրանի տնտեսությունն այն սակավաթիվ խոշոր տնտեսություններից է, որոնք պահպանել են դրական աճը նույնիսկ 2008թ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո: Գների վերահսկման և սուբսիդիաների համադրման արդյունքում ստացված աղավաղումները՝ հատկապես սննդամթերքի և էներգիայի ոլորտում, ծանրաբեռնեցին տնտեսությունը: 2009թ. վերջին, օրենսդիր մարմինն ընդունեց կառավարության 9-րդ օրինագիծը՝ սուբսիդիաները նվազեցնելու վերաբերյալ: Սա ամենաընդարձակ տնտեսական բարեփոխումն է՝ 2007թ. կառավարության իրականացրած բենզինի քվոտավորումից հետո:

---

[9] Plane P.; Privatization and economic growth: an empirical investigation from a sample of developing economies, applied economics, 1997; pp:789-802

[10] Barnett S.; Evidence on the fiscal and macroeconomic impact of privatization, IMF working paper no.130, Washington, D.C.; 2000; pp: 391-418

[11] Cook P., Uchida Y.; Privatization and economic growth in developing countries, journal of development studies, 39 (6); 2003; pp: 121-154

Հեղափոխությունից ի վեր պետության երկարաժամկետ նպատակներն են եղել տնտեսության անկախությունը, լրիվ զբաղվածությունը, սակայն 20-րդ դարի վերջերին երկրի տնտեսությունը բազմաթիվ խոչընդոտների հետ բախվեց: 1980-2000թթ. Իրանի բնակչության թիվն ավելի քան կրկնապատկվել է և զգալիորեն երիտասարդացել: Չնայած իրանցիների համեմատաբար մեծ մասը գյուղացիներ են՝ 1960-ականներից հետո գյուղատնտեսական արտադրանքի ծավալը զգալիորեն ընկել է: 1990-ական թվականների վերջին ԻԻՀ-ը դարձավ սննդամթերքի խոշոր ներկրող: Այդ ժամանակահատվածում գյուղական բնակավայրերում նկատվող տնտեսական դժվարությունների հետևանքով հսկայական թվով մարդիկ տեղափոխվեցին քաղաքներ:

1979թ. ազգայնացումից հետո Իրանի տնտեսության ավելի քան 80%-ը կենտրոնացավ պետության ձեռքում: 1988թ.՝ Իրան-Իրաքյան պատերազմից հետո, կառավարությունը փորձեց զարգացնել երկրի կապի, տրանսպորտի, արտադրության, առողջապահության, կրթության և էներգետիկայի ոլորտները և սկսեց իր հաղորդակցման և տրանսպորտային ենթակառույցների ինտեգրման գործընթացը հարևան երկրների հետ: ԻԻՀ-ում և այլ երկրներում իրականացված մասնավորեցման պատճառների միջև որևէ տարբերություն չկա: ԻԻՀ-ում մասնավորեցման ալիքը սկսվել է 2005 թվականին և մեծ թափ է ստացել հետագա տարիներին /գծապատկեր 1/:



Գծապատկեր 1. Մասնավորեցման (PRI) դինամիկան, 1990-2014թթ. ժամանակահատվածում[12]

<u>Ատենախոսության երրորդ՝ «ԻԻՀ տնտեսական աճի վրա մասնավորեցման ազդեցության վերլուծությունը»</u> գլխում քննարկվել են Իրանի տնտեսությունում մասնավորեցման արդյունավետության, պետության չափի և տնտեսական աճի հիմնախնդիրները: Այդ կապակցությամբ վերլուծվել են մակրոտնտեսական

[12] http://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?end=2014&locations=IR&start=1990&view=chart (2016,1 Oct.)

փոփոխականները և դրանց փոփոխության ազդեցությունը ուսումնասիրվող ժամանակահատվածում: Հետազոտությունը ուսումնասիրել է մասնավորեցումը և դրանից բխող եկամուտները:

Ուսումնասիրության նպատակով ընդգրկվել են հետևյալ փոփոխականները՝ ՀՆԱ-ն, տնտեսական աճը, պետության հանրային ծախսումները, ներմուծման և արտահանման ծավալները, արտաքին ուղղակի ներդրումները և նավթային եկամուտները: Փոփոխականների փոխադարձ ազդեցությունը և մասնավորեցման ազդեցությունը՝ դրանցից յուրաքանչյուրի վրա վերլուծելու նպատակով նախ ուսումնասիրվել է առանձին փոփոխականի ազդեցությունը մասնավոր հատվածի եկամուտների վրա: Բացի այդ, ուսումնասիրվել է նաև նրանց միջև եղած փոխհարաբերության ուղղվածությունը՝ օգտագործելով վիճակագրական, ինչպես նաև Գրենջերի պատահականությունների թեստ մեթոդը: Եվ ստացված արդյունքները մատնանշել են, որ բացառությամբ սղաճի և տնտեսական աճի, մյուս փոփոխականները դրսևորել են դրական ազդեցություն մասնավոր հատվածի եկամուտների վրա: Ուղղվածության առումով՝ վերոնշյալ փոփոխականները մասնավոր հատվածի եկամուտների փոփոխության պատճառ չեն եղել, բացառությամբ սղաճը և տնտեսական աճը:

Գրենջերի թեստով հաստատվել է, որ գոյություն ունի միակողմանի փոխհարաբերություն փոփոխականների և մասնավոր հատվածի միջև: Բացի դա, Բարրոյի ճշգրտված մոդելի կիրառմամբ ուսումնասիրվել է՝ Իրանի տնտեսական աճի վրա տնտեսական փոփոխականների ազդեցության արդյունավետությունը: Ուսումնասիրվել է նաև Իրանում մասնավորեցման գործընթացը՝ վերջին երկու տասնամյակների ընթացքում: Եվ վերլուծվել են հիմնական փոփոխությունները՝ հաշվի առնելով պետության չափի գործոնը: Ուսումնասիրվել է նաև մասնավորեցման քաղաքականությունը՝ ավելի արդյունավետ վերլուծության և այս գործընթացի վրա ազդող գործոնների բացահայտման նպատակով:

Ինչպես արդեն նշվել է, հետազոտությունը նպատակամղված է ուսումնասիրելու մակրոտնտեսական ցուցանիշների արդյունավետությունը՝ մասնավորեցման եկամուտների առնչությամբ, և բացահայտելու փոփոխականների միջև պատահական փոխհարաբերության տեսակը: Այդ նպատակով կիրառվել են մակրոտնտեսական փոփոխականների ժամանակային շարքեր՝ 1990-2014թթ. ժամանակահատվածի համար: Կիրառվել է նաև t-վիճակագրական թեստ մեթոդը, հետևյալ հարցին պատասխանելու համար՝

- Մակրոտնտեսական ո՞ր փոփոխականն է ազդում մասնավորեցման քաղաքականության /եկամուտների/ վրա:

Այս թեստի արդյունքները ամփոփվել են աղյուսակ 1-ում, որտեղ բերված են t-թեստի արդյունքները և մակրոտնտեսական յուրաքանչյուր փոփոխականի ազդեցությունը մասնավորեցման եկամուտների վրա: Վերուծությունները կատարվել են E-views համակարգչային ծրագրի միջոցով՝ օգտագործելով ՀԲ-ի վիճակագրական տվյալները:

Աղյուսակ 1.

Մակրոտնտեսական փոփոխականների ազդեցությունը մասնավորեցման վրա (t թեստի արդյունքները) [13]

փոփոխական	*Նավթ*	*Արտահանում*	*Ներմուծում*	*Սղաճ*	*Տնտես. աճ*	*ՀՆԱ*	*Պետության ծախսումներ*
t-թեստ	4.1834	5.1958	4.6020	-0.2897	-2.0465	7.6488	7.2253
Հավանական.	0.0000	0.0000	0.0000	0.0250	0.0000	0.0000	0.0000

Ինչպես երևում է աղյուսակ 1-ի տվյալներից, բացառությամբ սղաճի և տնտեսական աճի, մյուս փոփոխականների դեպքում t-վիճակագրական մեծությունը 2-ից մեծ է և նշանակալից մեծությունները 5%-ից քիչ են: Հարկ է նշել, որ փոփոխականների բացասական արժեքները նշանակալից են: Արդյունքները ցույց են տալիս, որ բոլոր փոփոխականները՝ բացառությամբ սղաճի և տնտեսական աճի, դրական ազդեցություն ունեն մասնավերոցման եկամուտների վրա:

Տեսականորեն սղաճի բացասական լինելը մեկնաբանվում է մասնավորեցման եկամուտների վրա դրա հակառակ ազդեցությամբ: Դա նշանակում է սղաճի անկման հետ հող է նախապատրաստվում ներդրումների ավելացման համար՝ ինչը նպաստում է այս հատվածում եկամուտների աճին: Ուստի, սղաճը այս հատվածի եկամուտների վրա թողնում է նշանակալից բացասական ազդեցություն:

Զարգացող երկրների մասնավոր հատվածում մրցակցությունը թույլ հիմքերի վրա է, որը պատճառներից մեկն է տնտեսական աճի նշանակալից բացասական մեծություն լինելու համար: Այդ իսկ պատճառով ենթադրվում է, որ այս հատվածում մրցակցության մակարդակը պետք է ավելանա, բացի դա պետք է վերլուծության ենթարկել մասնավորեցման քաղաքականության ազդեցության արդյունավետությունը տնտեսական աճի վրա:

Մյուս կողմից, պետական ծախսումների վիճակագրական մեծությունը մատնանշում է դրական ազդեցություն՝ մասնավորեցման եկամուտների վրա:

[13] Ramezan F., "Effectiveness model for privatization policy". International Journal of Current Life Sciences, Vol.4, Issue, 8, August, 2014, ISSN: 2249- 1465, pp: 4148-4153

Արդյունավետության ամենալավ ցուցանիշը դրսևորել է ՀՆԱ-ն: Այսինքն ՀՆԱ-ի ավելացումը հանգեցնում է մասնավոր հատվածում ներդրումների աճին, հետևաբար, ներդրումների ավելացումը խթանում է այս հատվածում եկամուտների մակարդակը: Ուստի կարելի է ամփոփել, որ ՀՆԱ-ի, ներդրումների և մասնավոր հատվածի եկամուտների միջև գոյություն ունի դրական փոխհարաբերություն:

Այսպիսով, առաջին հարցին կարելի է պատասխանել հետևյալ կերպ՝ մասնավորեցման եկամուտների վրա արդյունավետ ազդող փոփոխականները հանդիսանում են ՀՆԱ-ն, նավթային եկամուտները, պետության ծախսումները, արտաքին ուղղակի ներդրումները, ներմուծումը և արտահանումը: Իսկ սղաճի և տնտեսական աճի ազդեցությունը մասնավորեցման քաղաքականության վրա բացասական է:

Մյուս հարցերին պատասխանելու համար կիրառվել է Գրենջերի պատճառականությունների թեստ մեթոդը և ուսումնասիրվել փոխհարաբերությունները: Ստորև ներկայացված են հարցերի պատասխանները՝ հաշվի առնելով փոխհարաբերությունների միակողմանի կամ երկկողմանի լինելը՝ ըստ Գրենջերի թեստի արդյունքների:

Աղյուսակ 2.

Գրենջերի* թեստի վրա հիմնված մասնավորեցման եկամուտների և արտահանման միջև եղած փոխհարաբերությունը[14]

Վարկածը	F- վիճ.	H0 վարկածի հաստատման հավանական-ը
Ըստ Գրենջերի արտահանումը մասնավորեցման պատճառ չէ	11.2452	0.0009
Ըստ Գրենջերի մասնավորեցումը արտահանման պատճառ չէ	2.6250	0.1133

* *Գրենջերի պատճառականության թեստը վարկածների վիճակագրական թեստ է, որպեսզի որոշել թե արդյոք մեկ ժամանակային շարքը բավարա՞ր է որպեսզի մյուսը կանխատեսվի, թե՞ ոչ:*

Աղյուսակ 2-ի տվյալների հիման վրա կարելի է մեկնաբանել, որ ըստ Գրենջերի պատճառականության թեստի մասնավորեցման եկամուտները արտահանման պատճառ չեն և վարկածը հաստատվում է՝ 10% -ից բարձր հավանականությամբ: Սակայն վարկածը՝ թե ըստ Գրենջերի թեստի արտահանումը մասնավորեցման պատճառ չէ, մերժվում է՝ 10% -ից ցածր հավանականությամբ: Հետևաբար արտահանման փոփոխությունները մասնավորեցման եկամուտների ավելացման պատճառ են հանդիսանում: Սա

[14] Ramezan F., "Effectiveness model for privatization policy". International Journal of Current Life Sciences, Vol.4, Issue, 8, August, 2014, ISSN: 2249- 1465, pp: 4148-4153

ցույց է տալիս այն փաստը, որ արտահանման մակարդակի ավելացումը խթանում է մասնավոր հատվածի եկամուտների աճը: Սա կարող է կապված լինել աշխատանքային միջավայրում բարեփոխումների, մասնավոր հատվածի ներգրավման ավելացման և արտահանման պայմանների բարելավման հետ: Բացի այդ, արդյունքները մատնանշում են միակողմանի պատճառականության փոխհարաբերություն: Այսինքն, արտահանման քանակի փոփոխությունը ազդում է մասնավորեցման գործընթացի վրա, մինչդեռ հակառակը հնարավոր չէ:

Ինչ վերաբերում է ներմուծմանը, ապա Գրենջերի թեստի արդյունքները ցույց են տվել, որ ներմուծման մակարդակի փոփոխությունները հանգեցնում են մասնավորեցման ավելացմանը և հետևաբար եկամուտների աճին: Բացի դա, այս փոխհարաբերությունը միակողմանի է, այսինքն՝ ներմուծումը խթանում է մասնավորեցումը, սակայն հակառակը հնարավոր չէ: Փոխհարաբերությունը միակողմանի է նաև արտերկրյա ուղղակի ներդրումների և մասնավորեցման միջև: Այսինքն՝ արտերկրյա ուղղակի ներդրումների փոփոխությունը հանգեցնում է մասնավորեցման եկամուտների փոփոխությանը, սակայն հակառակը հնարավոր չէ:

Նմանապես Գրենջերի թեստի արդյունքները ցույց են տվել միակողմանի պատճառականության փոխհարաբերություն ՀՆԱ-ի և մասնավորեցման եկամուտների միջև: Դա նշանակում է, որ ՀՆԱ-ի աճը խթանում է մասնավոր հատվածի եկամուտները, սակայն հակառակը հնարավոր չէ: Նույնը կարելի է ասել նաև նավթային եկամուտների պարագայում: Այսինքն՝ նավթային եկամուտների ավելացումը խթանում է մասնավորեցման եկամուտների աճը: Սակայն լինելով միակողմանի փոխհարաբերություն՝ հակառակը հնարավոր չէ:

Աղյուսակ 3-ում և 4-ում՝ սղաճի և տնտեսական աճի Գրենջերի թեստի արդյունքների առնչությամբ, ակնհայտ է վարկածի հաստատումը: Դա նշանակում է, որ փոփոխականներից յուրաքանչյուրի մեջ որևէ փոփոխություն չի նպաստում մասնավորեցման եկամուտների մեջ փոփոխությունների առաջացմանը:

Աղյուսակ 3.

Գրենջերի թեստի վրա հիմնված սղաճի և մասնավորեցման եկամուտների միջև եղած փոխհարաբերությունը [15]

վարկածը	F- վիճ.	H0 վարկածի հաստատման հավանական-ը
Ըստ Գրենջերի սղաճը մասնավորեցման պատճառ չէ	1.4233	0.2716
Ըստ Գրենջերի մասնավորեցումը սղաճի պատճառ չէ	0.0758	0.9273

[15] Ramezan F., “Effectiveness model for privatization policy”. International Journal of Current Life Sciences, Vol.4, Issue, 8, August, 2014, ISSN: 2249- 1465, pp: 4148-4153

Աղյուսակ 4.

Գրենջերի թեստի վրա հիմնված տնտեսական աճի
և մասնավորեցման եկամուտների միջև եղած փոխհարաբերությունը[16]

վարկածը	F- վիճ.	H0-ի հաստատման հավանական-ը
Ըստ Գրենջերի տնտեսական աճը մասնավորեցման պատճառ չէ	18.7276	0.8303
Ըստ Գրենջերի մասնավորեցումը տնտեսական աճի պատճառ չէ	3.7489	0.4160

Ըստ Գրենջերի թեստի արդյունքների պետական ծախսումների փոփոխությունները համամասնորեն հանգեցնում են մասնավոր հատվածի եկամուտների փոփոխությանը, սակայն այս փոխհարաբերությունը միակողմանի է և հակառակը հնարավոր չէ:

Որպեսզի պետության օպտիմալ չափը որոշվի կիրառվել է Արմեյի (Armey,1995) տեսական մոտեցումը: Այդ կապակցությամբ Իրանում պետության չափը ուսումնասիրելու համար գնահատվում է տնտեսական աճի և պետության չափի միջև փոխհարաբերությունը՝ ոչ գծային մոդելի տեսքով: Պետության չափը գնահատվում է հանրային ծախսումների և ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշով՝ կայուն գներով արտահայտված: Հանրային ծախսումների և ՀՆԱ-ի հարաբերակցությունը, սովորաբար համարվում է պետության չափի տնտեսական ցուցանիշ: Պետության ծախսումները հաշվարկվում է սպառված և ներդրումային ծախսերի կամ ընթացիկ և քաղաքացիական ծախսերի միջոցով:



Գծապատկեր 2: Իրանի տնտեսության Armey կորը, 1990-2014թթ. [17]

[16] Ramezan F., "Effectiveness model for privatization policy". International Journal of Current Life Sciences, Vol.4, Issue, 8, August, 2014, ISSN: 2249- 1465, pp: 4148-4153

[17] http://databank.worldbank.org/data/reports.aspx?source=2&country=IRN (2016,1 October)

Ինչպես երևում է գծապատկեր 2- ում, կառավարության փոքր չափի դեպքում, տնտեսական աճը մատնանշող ՀՆԱ-ն ցածր մակարդակ ունի: Պետության չափի մեծացումը ավելացնում է ՀՆԱ-ն՝ իր առավելագույն մակարդակին հասցնելով, այնուհետև՝ կորի իջնող թեքությունում նկատելի է ՀՆԱ-ի մակարդակի անկում: Այլ կերպ ասած, պետական ծախսումների ավելացումը նախ բարելավում է տնտեսությունը՝ խթանելով տնտեսական աճ, հետո հակառակ երևույթն է տեղի ունենում՝ այսինքն տնտեսական աճը նվազում է: Հետևաբար, ինչպես որ Armey կորն է ցույց տալիս, եթե պետության չափը 66%-ից ցածր լինի, կավելանան պետական ծախսումները՝ հանգեցնելով տնտեսական աճի: Մյուս կողմից, եթե պետության չափը գերազանցում են 66%-ը, ապա պետական ծախսումների բացասական ազդեցությունը կգերազանցի դրա դրական ներգործությանը: Կորի գնահատումների արդյունքները մատնանշում են պետության չափի և տնտեսական աճի միջև ոչ գծային փոխհարաբերության գոյությունը, ցույց տալով առավելագույն չափը: Այնուամենայնիվ, կարևորն այն է, որ ԻԻՀ-ում պետության չափը ներկայումս ավելի մեծ է, քան ցանկալի է, ինչը ենթադրում է, որոշակի միջոցներ պետք է նախաձեռնվեն՝ այդ չափը տրամաբանական մեծության հասցնելու համար: Այսպիսով, թեպետ ըստ Armey կորի՝ տնտեսության առումով ցանկալի է հավասարակշռված կառավարություն, մյուս կողմից պետության ուռճացած չափը անցանկալի է:

Գլխում քննարկվել է Բարրոյի (Barro R., 1991)[18] մոդելը, որը այս հետազոտության վերլուծությունների հիմնաքարն է: Հետազոտությունն ուղղված է պատասխանելու այն հիմնական հարցին, թե արդյոք գոյություն ունի՞ նշանակալի փոխհարաբերություն Իրանի տնտեսական աճի և մասնավորեցման միջև: Փոխհարաբերությունը ՀՆԱ-ի և անկախ փոփոխականների միջև ARDL մեթոդով ձևակերպելու նպատակով կիրառվել է հետևյալ հավասարումը՝

$$GGDP = C + \alpha.\frac{PRI}{GDP} + \beta.\frac{INV}{GDP} + \gamma.INF + \theta.\frac{FDI}{GDP} + \mu.\frac{OIL}{GDP} + \pi.OPN + \varepsilon$$

որտեղ՝ C –ն հաստատուն մեծություն է, α, β, γ, μ և π գործակիցներ են:

Իսկ փոփոխականներն են՝GGDP՝ ՀՆԱ-ի աճի հարաբերակցություն, INV՝ պետական ծախսումներ, INF՝ սղաճ, PRI՝ մասնավորեցում, PRI/GDP՝ մասնավորեցում/ՀՆԱ հարաբերակցություն, FDI/GDP՝ արտաքին ուղղակի ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցություն, OIL՝ նավթային եկամուտներ, OPN՝ տնտեսության ազատության աստիճանը*, GDP՝ ՀՆԱ, FDI՝արտաքին ուղղակի ներդրումներ, ε՝ մնացորդային տերմին:

[18] Barro R.; Economic growth in a cross-section of countries, quarterly journal of economics, 1991; pp: 407-443

* Որպես մրցակցային մեծություն, որը գնահատվում է հետևյալ հարաբերակցության միջոցով՝ $\frac{Export + import}{GDP}$ ratio

Պետք է նշել, որ մոդելին ավելացվել է նաև նավթային եկամուտների փոփոխականը, որպես առանցքային գործոն, որն ազդում է իրանական տնտեսության վրա: ARDL-ը հարմար մեթոդ է փոփոխականների միջև փոխհարաբերությունները վերլուծելու համար՝ կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով: H0 վարկածը մերժելու կամ ընդունելու նպատակով հաշվարկված F-արժեքը և f-վիճակագրական մեծությունը պետք է համեմատվեն: Եթե հաշվարկված F-ը ավելին է քան F միջակայքի արժեքներն են, ապա H0 վարկածը մերժվում է՝ հիմք ընդունելով այն փաստը, որ երկարաժամկետ կտրվածքով փոխհարաբերություն գոյություն չունի: Մյուս կողմից, եթե հաշվարկված F-ը ավելի փոքր է, քան F միջակայքի արժեքներն են, ապա H0 վարկածը չի մերժվում: Այն դեպքում, երբ հաշվարկված F-արժեքը գտնվում է երկու F արժեքների արանքում, ապա երկարաժամկետ փոխհարաբերության գոյությունը անորոշ է, և հնարավոր չէ եզրահանգում կատարել:

Ստացված արդյունքները ցույց են տալիս՝ թե՛ կարճաժամկետ և թե՛ երկարաժամկետ կտրվածքով մասնավորեցման նշանակալի բասացական ազդեցությունը տնտեսական աճի վրա, հատկապես զարգացող երկրների պարագայում, այդ թվում Իրանի: Դա կապված է այն հանգամանքի հետ, որ մասնավորեցումը որպես տնտեսական աճի քաղաքականություն պետք է վերլուծվի երկրի այլ տնտեսական քաղաքականությունների համատեքստում: Հետազոտողների համոզմամբ այսպիսի բացասական փոխհարաբերության պատճառը մասնավոր հատվածում մրցակցության գործոնի բացակայությունն է:

Չնայած այն հանգամանքին, որ Իրանում մասնավորեցումը կարճաժամկետ կտրվածքով նշանակալի է, այդ արդյունքը չի հաստատվել երկարաժամկետ կտրվածքում: Այնուամենայնիվ, հետազոտության կարևոր կետն այն է, որ երկու ժամանակահատվածներում էլ նավթային եկամուտները նշանակալի են, ուստի եթե այս կապվածությունը շարունակվի, մենք կարծում ենք, որ մասնավորեցման գործընթացը չի նպաստի ԻԻՀ տնտեսական աճին: Ավելին, գնահատումները մատնանշում են, որ հանրային ռեսուրսների 50% -ից ավելին պայմանավորված է նավթային գործոնով, ինչը հաստատում է Իրանի տնտեսության կախվածությունը նավթային եկամուտներից: Ընդ որում, պետք է նկատել, որ Իրանի բյուջեյի կախվածությունը նավթից հաճախ կարող է խիստ ազդել սղաճի վրա, այնպես որ, միջին սղաճը վերջին 10 տարիների կտրվածքով եղել է 18-20%: Այս կապակցությամբ առաջին ռազմավարությունն այն է, որ քաղաքականություն մշակողները պետության չափը վերահսկելու որոշում կայացնեն և կանխեն բյուջեյի աննպատակ ուռճացումը՝ ազգային արտադրությունը հզորացնելու և ազգային բիզնեսները հովանավորելու միջոցով, որից բացի այլ ուղի չկա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուսումնասիրությունների համաձայն, մասնավորեցումը քաղաքականություն է, որի արդյունավետ կիրառությունը կապված է մի շարք գործոնների հետ: Այս ոլորտում առկա տեսական և գործնական ուսումնասիրությունները՝ թե՛ Իրանում և թե՛ այլ զարգացող երկրներում, ցույց են տվել, որ նշված երկու փոփոխականների առնչությամբ տարբեր հեռանկարներ գոյություն ունեն:
2. Մի շարք տեսությունների համաձայն մասնավորեցումը կարող է դրական ազդեցություն ունենալ տնտեսական աճի վրա, և սա հատկապես ճիշտ է զարգացած երկրների պարագայում, որոնց տնտեսությունը կայուն հիմքերի վրա է գտնվում: Այնուամենայնիվ զարգացող երկրներում, որոնց տնտեսությունը կայուն վիճակում չէ և հիմնականում կախված է նավթային եկամուտներից, մասնավորեցումը չի կարող արդյունավետ լինել, նույնիսկ բացասաբար է անդրադառնում տնտեսական աճի վրա:
3. Գործնականում մասնավորեցումը թեպետ անհրաժեշտ գործիքներից է՝ պետական տնտեսական համակարգը շուկայականի փոխելու համար, այնուամենայնիվ դա չի կարող հանդիսանալ տնտեսական բոլոր մարտահրավերների լուծման ուղի: Ավելին, թե՛ կարճաժամկետ և թե՛ երկարաժամկետ կտրվածքով, մասնավորեցումը տնտեսական աճին հասնելու միակ եղանակը չէ:
4. Արդյունքները ցույց են տվել, որ պետական ընկերությունների մասնավորեցումը նպատակ չէ, այլ դա ինքնիրեն գործիք է՝ մի շարք տնտեսական թիրախներ ձեռքբերելու համար: Այս կապակցությամբ, գործունեության ապահովման նախապայման է համարվում նպատակահարմար իրավական դաշտի և արդյունավետ ֆինանսական քաղաքականությունների գոյությունը:
5. Ստացված արդյունքներով հաստատվել է, որ հանրային հատվածի վերաբերյալ զարգացած երկրների փորձը չի կարող ծառայել, որպես հարմար օրինակ զարգացող երկրների համար, քանի որ, երկրից երկիր իրավիճակը, տնտեսական կառուցվածքը և դրա գործունեության համար նախատեսված ենթակառուցվածքները ամբողջությամբ տարբեր են:
6. Զարգացող երկրներում արդյունավետ ֆինանսական շուկայի բացակայությունը, կազմակերպությունների պարտավորությունների մեծ բեռը, և տնտեսա-քաղաքական առումով տարբեր գաղափարները ի վերջո մասնավորեցման գործընթացի ձախողման պատճառ են դառնում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Առաջարկվում է ուսումնասիրել և վերլուծել տնտեսական աճի գործընթացի վրա ազդող ուղղակի և անուղղակի գործոնները, այդ թվում՝ եկամտաբերությունը, նյութական-ֆիզիկական գործոնները և տնտեսական հատվածների մասնաբաժինը:

- Առաջարկվում է վերլուծության ենթարկել նավթային եկամուտներից կախվածություն ունեցող երկրների, այդ թվում Իրանի, տնտեսության կախվածության դրդապատճառները և այդ հիմնախնդրի վերաբերյալ համապատասխան լուծումներ տալ:
- Քանի որ, գոյություն ունի ոչ գծային փոխհարաբերություն պետության չափի և տնտեսական աճի միջև, պետության օպտիմալ չափը 66% է: Այս արժեքը համահունչ չէ պետության մասնավորեցման քաղաքականության նպատակների հետ, և հաշվի առնելով ոչպետական հատվածում ներդրման հնարավորության, պետության միջամտության չափի կրճատման և այլ հանգամանքները, առաջարկվում է Իրանում լուրջ որոշումներ ընդունել պետության չափը բարելավելու և նվազեցնելու կապակցությամբ:

Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Ռամեզան Ֆ., “Government expenditure and economic growth”/ Պետական ծախսերը և տնտեսական աճն Իրանում:/ Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, ISSN 1829-071X, No (6), Երևան, 2011թ., էջ 212-221
2. Ռամեզան Ֆ., “The relationship between government size and economic growth” /Կառավարության չափի և տնտեսական աճի միջև փոխհարաբերությունը:/ Հայաստան, Ֆինանսներ և էկոնոմիկա, N5 (143) մայիս, 2012, ISSN: 1829-0787, էջ 29
3. Ռամեզան Ֆ., “Economic effect of privatization case study in Iran”. /Մասնավորեցման տնտեսական ազդեցությունն Իրանում:/ Հայաստան, Ֆինանսներ և էկոնոմիկա, N7 (145) հուլիս, 2012, ISSN: 1829-0787, էջ 54-55
4. Ռամեզան Ֆ., “Effectiveness model for privatization policy”. International Journal of Current Life Sciences - Vol.4, Issue, 8, August, 2014, ISSN: 2249-1465, էջ 4148-4153
5. Ռամեզան Ֆ., “An investigation on the effect of government size in economic growth: a case study in Iran”. International Journal of Current Life Sciences - Vol. 4, Issue, 9, September, 2014, ISSN: 2249- 1465, էջ 5563-5568
6. Ռամեզան Ֆ., “Assessing effect of privatization on economic growth due to presented variables in long term and short term”. International Journal of Current Life Sciences - Vol.4, Issue, 9, September, 2014, ISSN: 2249- 1465, էջ 5590-5594

ФАРХАД САИДОВИЧ РАМЕЗАН

ПРИВАТИЗАЦИЯ И ЛИБЕРАЛИЗАЦИЯ ЭКОНОМИКИ И ИХ РОЛЬ ДЛЯ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА (НА ПРИМЕРЕ ИРИ)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.01 “Общая экономика”.

Защита диссертации состоится 7-го апреля 2017 г.в 13^{30} часов на заседании специализированного совета 015 ВАК РА по экономике, действующего в ЕГУ по адресу: г. Ереван, 0009, ул. Абовяна 52.

Р Е З Ю М Е

Исследование имеет целью изучить взаимоотношения между экономическом ростом и приватизацией, особенно воздействие доходов, получаемых в результате приватизации, на экономический рост Ирана на основании модели “Барро” в период 1990-2014 гг.

Одним из средств для достижения удовлетворительного экономического роста в современных государствах является приватизация. Идея приватизации в Иране возникла, когда в 1983 г. учреждением государственных предприятий ожидаемый результат не был достигнут. Согласно статье 44-й Конституции экономическая система Ирана должна быть основана на общественном, коопертативном и частном секторах по соответствующим планам.

Во всем мире проведены многочисленные исследования, относящиеся взаимоотношениям между приватизацией и экономическим ростом. Однако, необходимо отметить, что исследования по этой теме, осуществленные в Иране, не достаточны и привели к разным выводам. Одна их часть выявила положительные взаимоотношения между приватизацией и экономическим ростом, а остальная часть – негативное.

Исследование отличается от ранее осуществленных тем, что введены также переменные конкурентности и нефтяных доходов, при этом последняя является важным фактором, влияющим на экономический рост Ирана. Учитывая вышеизложенное, исследование воздействия приватизации на экономический рост Ирана с точки зрения макроэкономических важнейших факторов является актуальным, а его осуществление – необходимой.

Объектом исследования являются современные концепции и программы приватизации в процессе экономического развития и макроэкономические показатели, связанные с осуществлением этой политики – нефтяные доходы, приватизация, ВВП, рост цен, размер управления и экономический рост. В исследовании применена модель Барро (1991) экзогенического экономического роста. К модели в качестве ключевого фактора прибавлена также переменная нефтяных доходов, которая влияет на иранскую

экономику. Применены также Т статистический тест-метод и тест причинности Грейнджера.

Научная новизна диссертации состоит в следующем:

- Оценено взаимоотношение между размера государства и экономическим ростом в экономике ИРИ для периода 1990-2014 гг. В частности установлена оптимальная размера государства (66%).

- Оценена взаимная связь важных экономических показателей ИРИ и воздействие друг на друга, и установлена их эффективность с учетом нефтяных доходов, доходов от приватизации, инфляции, экономического роста и государственных расходов.

- Для экономического роста выявлены роль и значение иных доходов государства в сферах, зависящих от продажи нефти.

- Выявлена роль доходов, образованных от приватизации, для экономического роста, в краткосрочном и долгосрочном разрезе.

Из выводов, осуществленных по результатам исследования стоит отметить следующие два:

1. По полученным результатам установлено, что опыт развитых стран относительно общественного сектора не может служить в качестве примера для развивающихся стран, так как ситуация, экономическая структура и инфраструктура ее деятельности полностью отличаются из страны в страну.

2. В какой бы форме не осуществлялась трансформация общественных организаций в частные, она приведет к ряду осложнений. В развивающихся странах отстуствие эффективного рынка, большой груз обязательств организаций и разные экономико-политические идеи в конце концов становятся причиной срыва процесса приватизации.

Из предложений, относящихся размерам государства, самое большое внимание заслуживает следующее:

- так как, существует не линейное взаимоотношение между размером государства и экономическим ростом, оптимальный размер размера государства является 66 %. Эта величина созвучна с целями политики приватизации. Учитывая возможность инвестиций в негосударственный сектор, сокращение размера вмешательства государства и иные обстоятельства, предлагается принимать серьезные решения в ИРИ для улучшения и снижения размера государства.

FARHAD SAEID RAMEZAN

PRIVATIZATION AND LIBERALIZATION OF THE ECONOMY AND ITS ROLE IN ECONOMIC GROWTH (CASE STUDY OF IRI)

The Dissertation is submitted for pursuing the PhD degree of Economics in the specialty of 08.00.01 "General Economics".

The Defense of the dissertation will take place on 7th of April 2017 at 13^{30}, at the Meeting of Specialized Council 015 of the SCC of the RA acting at the Yerevan State University. Address: 52 Abovyan str., Yerevan, 0009, Armenia.

A B S T R A C T

The research is aimed at studying the relationship between privatization and economic growth in Iranian economy, as well the impact of privatization incomes (PRI) on the economic development in the country during the period of 1990-2014, based on the "Baroo" growth model.

Nowadays, privatization is one of the desirable ways for governments to reach reasonable economic growth. The idea of privatization in Iran was raised as the result of not realizes predictions, which were expected from the establishment of SOEs in Iran in 1983. As stated by the Article 44, the economic system of Iran shall be based on public, cooperative and private sectors, with proper and sound planning.

A lot of studies have been done about the relationship between privatization and economic growth all over the world. However, the researches carried out with respect to this issue are not sufficient in Iran.

Different results were obtained about relationship between privatization and economic growth by the researchers. Some of them have found positive relationship between these two variables and some negative.

This study is different from other former studies in terms of investigating competitiveness variable and the oil revenues variable, which is as a key effective dependent variable on the Iranian economic growth.

Considering the above mentioned, investigating the effects of privatization on economic growth in terms of key macroeconomic growth factors in Iran is an important research issue and its implementation is necessary.

Research object is related to the plans and current views of privatization in the economic development process, as well as the macroeconomic indicators related to implementation of the said policy, such as oil revenues, PRI, GDP, inflation rate, government size and economic growth.

This study uses exogenous economic growth model of Barro (1991). In the model, the oil revenues variable was included as a key factor, which significantly affects the Iranian economy. Also the T test and the Granger-causal relationship methods have been applied.

The novelties of the research are as follows:

- The relationship between government size and economic growth in Iranian economy was evaluated for the periods of 1990-2104. Specially, the government optimal size was determined (66%).
- The relationship between main economic indicators of IRI and their mutual impacts were evaluated; and their effectiveness (efficiency) was determined by considering oil revenues, PRI, inflation, economic growth and government expenditure.
- The role and importance of other incomes of the government on economic growth, in oil based economies, was revealed.
- The role of PRI (privatization income) on economic growth was revealed, both in short run and long term.

The following two conclusions concluded in the research are worth to mention:

- According to the obtained results, the experience of developed countries in regard with public sector can't be a suitable pattern for use of developing countries, since the countries are in a completely different situation with their specific economic structure and prepared infrastructures for economic activities.
- Transferring public organizations to the private sector can result in some problems in any manner it is implemented. In developing countries, lack of efficient financial markets and high debt rate of the organizations and also different ideas in regard with social-political aspects can cause failure for the movement.

Among the suggestions made the most worthy to be mentioned is about the government size as below:

- Since there is a nonlinear relation between government size and economic growth and optimal size of government is 66%, and this value was not consistent with government goals of privatization policy, providing the opportunity of investing in nongovernmental sectors, minimizing governmental sectors` size, and so forth; it is suggested that some basic decisions be adopted by Iranian government to improve and minimize government size.